

գովասանութիւն երգերով կ'առաջնորդէին Ամանոսի լեռը, որ այն ժամանակներէն եւ մահմեդականաց «Կեաւուռ տաղը» անունն ստացաւ:

Այդ օտարականը, որ քրիստոնէայ էր եւ արաբական ոչինչ չունէր բացի իւր զէնքերէն, ձիէն եւ զգեստներէն, որ այն նեղ վայրկենին իրենց օգնութեան հասեր էր, եւ որ այնչափ քաջութիւն եւ յաջողութիւն ունէր, իբրեւ սուրբ կամ իբրեւ երկնային էակ սկսան նկատել այդ լեռնականք եւ կը խնդրէին, որ չթողու, չերթայ. այլ մնա իրենց քով, լինի իշխան եւ զօրավար: Հագիւ հասան իրենց լեռնային գիւղը, որ Ամանոսի ընթացք վրայ գտնուէալ խրճիթներու հաւաքմունք մ'էր, ինչ պատիւ եւ ինչ յարգանք որ կրնային մատուցին, կանայք, աղջկունք, երբ կ'անցնէր, մատնանիշ զինք կը ցցնէին, եւ ծերերու պատկառելի խումբը բոկոտն կը մօտենար իրեն, մինչեւ եկաւ հրապարակի նման տեղ մը, ուր ընդարձակ խրճիթ խաչի նշան վրան՝ կը յայտնէր թէ եկեցեղին եկած էին: Հոն ասորի եպիսկոպոս մը իւր եկեղեցական դասուն հետ խաչիւ եւ Աւետարանաւ զինքն ընդունեց: Սուրբն այս կրօնական նշաններուն առջեւ իջաւ ձիէն եւ արժանի երկրպագութիւնը մատուց, բայց խնդրեց, որ իրեն հանգստեան տեղ ցցնեն, վասնզի յոգնած էր կ'ըսէր, եւ մանաւանդ թէ յոգնած էր այն ցոյցերէն եւ չէր ուզէր յայտնել:

Գիւղին ամենալաւ խրճիթը տուին Մարտայիթ Սուրբնի, որ շէնքովն թեպէտ հասարակ եւ անտաշ փայտերու կերտուած մ'էր երկու դռներով առանց պատուհանի, որոց մէկը պայծառ վտակի մը վրայ կը բացուէր դարաւոր կաղնիներով հովանաւորեալ: Ճաշի՝ խորովածն ու զինին առատապէս առաջը դրին, եւ ոչ ոք սեղանին չմասնակցեցաւ ի նշան յարգութեան եւ ոչ եպիսկոպոսն, որ խոնարհաբար նստած էր հեռու ժողովրդեան ծերակոյտին հետ: Սուրբն հարցուց իրենց վիճակը եւ իմացաւ թէ այդ ժողովրդեան մեծ մասը մահմեդական կ'ատաղութենէն փախած այդ լեռներուն ապաստանեալ՝ գրեթէ շարունակ պատերազմի մէջ էին եւ թէ օրաւոր յուսահատութիւնը կը տիրէր իրենց վրայ, վասնզի Հերակլ կայսեր Ասորիք թողլով երթաւէն եւ մեծին Անտիոքայ իջնելէն վերջ՝ նոր կորուստ մը նաեւ ունէին, իրենց իշխանը, որ շատ քաջ մարդ էր՝ մեռեր էր դարանամուտ մահմեդականաց ձեռք, եւ նոր դժբախտութիւն մը նաեւ հիմա կը հասներ իրենց այն, որ Կոստանդին կայսրը՝ Հերակլի թոռը, իրենց դրկէր էր հաւատոյ դաւանութիւն մը, եւ որ իրենց բոլոր աստուածաբանք հերետիկոսական գտնուելով չէին ընդունէր, բայց դարձեալ թուղթ մը հասեր էր կայսրէն նոյն այն միջոցին, որ կը հրամայէր խստիւ ընդունիլ իւր առաջարկած դաւանութիւնը՝ սպառնալով ջնջել զիրենք աշխարհքիս վրայէն: Այսպէս մէկ կը սղմէն մահմեդականութիւնն կը սպառնար